ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի սեպտեմբերի** 7-**ի նիստի** N 2 **արձանագրությունից**
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- **«Կառավարում» մասնագիտության շրջանակում «Կառավարման տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի ներդրման նպատակահարմարության մասին հարցը**:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

Նշվեց, որ «Կառավարման տեղեկատվական համակարգեր» բակալավրական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից բիզնեսի և կառավարման ոլորտում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի ներդրման և կիրառման ունակություններ տրամադրելուն: Ծրագիրը նպատակաուղղված է տնտեսության բազմաթիվ ոլորտներում տեղեկատվական համակարգերի նախագծման, կազմակերպական սպասարկման և շահագործման մասնագետներ պատրաստելու համար, որոնք որպես տնտեսագետ կադրեր բավական խորությամբ տիրապետում են նաև հաշվողական համակարգերի տեխնիկական և ծրագրային ենթահամակարգերին: Ծրագիրը հենվում է բիզնես ոլորտում տեղեկատվական համակարգերի գործունեության չորս հիմնական ուղղությունների վրա՝ համակարգչային ցանցերի կառավարում և անվտանգություն, տվյալների կազմակերպում և տվյալների բազաների կառավարում, կորպորատիվ տեղեկատվական համակարգեր և գլոբալ ցանցում բիզնես ուղղվածության WEB կայքերի նախագծում, ստեղծում և կառավարում: Բակալավրական ծրագիրը ներառում է ընդհանուր

տնտեսագիտական առանցքային մոդուլները, ինչպիսիք են տնտեսագիտության տեսություն, կառավարում, միկրոէկոնոմիկա, մակրոտնտեսական քաղաքականություն և վերլուծություն, ֆինանսներ, մարքեթինգ և այլն: Կառավարման տեղեկատվական համակարգերի մասնագետները կարող են աշխատել պետական կառավարման մարմիններում և բիզնես ոլորտում որպես տարբեր մակարդակներում ռազմավարական տեխնոլոգիաների գծով խորհրդատուներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկություններում որպես կառավարիչներ, բիզնես համակարգերի նախագծող, բիզնես համակարգերի ճարտարապետ, բիզնես վերլուծաբան, մատակարարում-ների շղթայի կառավարիչ, վաճառքի կառավարիչ: Նրանք կարող են զբաղեցնել նաև կառավարության, ճյուղային նախարարությունների և պետական մարմինների տեղեկատվական տեխնոլոգիաների բաժիններում և վարչություններում ցանկացած մասնագետի պաշտոն: «Կառավարման տեղեկատվական համակարգեր» կամ նմանատիպ մասնագիտութունները ներկայացված են տնտեսագիտական և բիզնես կրթություն ոլորտի եվրոպական բուհերի ճնշող մեծամասնությունում:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հավանություն տալ «Կառավարում» մասնագիտության շրջանակում «Կառավարման տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի ներդրմանը և նպատակահարմար համարել այն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Սեպտեմբերի 7
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի սեպտեմբերի** 7-**ի նիստի** N 2 **արձանագրությունից**
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- «**Ֆինանսներ» մասնագիտության շրջանակում «Ապահովագրական գործ» կրթական ծրագրի ներդրման նպատակահարմարության մասին հարցը**:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

Նշվեց, որ «Ապահովագրական գործ» կրթական ծրագիրն ունի մեծ պահանջարկ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային ապահովագրական աշխատաշուկաներում: Այն տեսական, գործնական և պրակտիկ դասընթացների ամբողջություն է, որի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ուսանողներին ստանալ տնտեսագետի բարձրագույն որակավորում, որոնք հետագայում իրենց ուրույն տեղը կգտնեն ապահովագրության ոլորտում: Նշվեց նաև, որ ՀՀ ապահովագրական շուկայում աշխատում և հատկապես առաջատար պաշտոններ են զբաղեցնում վերջին 14 տարիների ՀՊՏՀ «Ապահովագրական գործ» մասնագիտացման շրջանավարտները: ՀՊՏՀ և ՀՀ առաջատար ապահովագրական ընկերությունների կողմից վերջին տարիների ընթացքում համատեղ կազմակերպվել են վարպետության դասընթացներ: Այդ համագործակցության շրջանակներում ուսանողները հնարավորություն են ստանում գործնական գիտելիքներ ձեռք բերել հանրապետության առաջատար ապահովագրական ընկերություններում: Բացի այդ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն

ընդգծված տնտեսագիտական ուղղվածություն ունեցող բուհ է, հետևաբար խիստ անհրաժեշտ է, որպեսզի այն իրականացնի կադրերի պատրաստում տնտեսագիտական այնպիսի կարևորագույն մասնագիտության ուղղությամբ, ինչպիսին է «Ապահովագրական գործը»: Միաժամանակ, բուհն ունի դրա համար նաև անհրաժեշտ կարողություն: «Ապահովագրական գործ» կրթական ծրագրի ուսումնական պլանն ընդգրկում է ընդհանուր հումանիտար և սոցիալական, մաթեմատիկական ու բնագիտական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտացման դասընթացներ ու պրակտիկա: Ուսումնառության ընթացքում ուսանողը ձեռք է բերում համապարփակ տեսական և գործնական գիտելիքներ ապահովագրական գործի, ապահովագրական գործունեության իրականացման առանձին տեսակների և գործառնությունների կատարման, կառավարչական գործունեության իրականացման, ինչպես նաև գիտելիքներ ժամանակակից ապահովագրական տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հավանություն տալ «Ֆինանսներ» մասնագիտության շրջանակում «Ապահովագրական գործ» կրթական ծրագրի ներդրմանը և նպատակահարմար համարել այն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Սեպտեմբերի 7
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի սեպտեմբերի** 7-**ի նիստի** N 2 **արձանագրությունից**
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- «**Ֆինանսներ**» **մասնագիտության շրջանակում** «**Բանկային գործ**» **կրթական ծրագրի ներդրման նպատակահարմարության մասին հարցը**:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

Նշվեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում «Բանկային գործ» մասնագիտացման նկատմամբ ձևավորվել է որակյալ կադրերի պատրաստման մեծ փորձ: Համալսարանը համագործակցում է հայաստանյան առաջատար բանկերի հետ և այդ համագործակցության շրջանակներում ուսանողները հնարավորություն են ունենում ձեռք բերել գործնական գիտելիքներ: Այսօր «Բանկային գործ» մասնագիտացման ավարտական կուրսի բոլոր ուսանողները վարպետության դասեր են անցնում «Արարատբանկ» ԲԲԸ-ում և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում: Վարպետության դասընթացներն ավարտվում են սերտիֆիկատների հանձնմամբ: Այս մասնագիտացման նկատմամբ մեծ պահանջարկը ենթադրում է, որ այն պետք է ունենա ակադեմիական ուղղվածություն և «Բանկային գործ» կրթական ծրագրի մշակումն ու ներկայացումը ժամանակի հրամայական է: Ծրագրի ուսումնական պլանն ընդգրկում է ընդհանուր հումանիտար և սոցիալական, մաթեմատիկական ու բնագիտական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտացման դասընթացներ ու պրակտիկա:

Կրթական ծրագրի կարևորագույն ուղղությունն է՝ բավարարել բանկային ոլորտի աշխատաշուկայի պահանջարկը և տալ կայուն ու միջազգային բանկային կրթական վերջնարդյունքներով օժտված կադրեր, ովքեր ունակ են իրականացնել մասնագիտական գործունեություն ֆինանսավարկային կազմակերպությունների ֆինանսական, տնտեսական և կառավարչական գործունեության ոլորտում, ունեն գիտելիքներ ժամանակակից պայմաններում առևտրային բանկերի կողմից միջոցների ներգրավման և դրանց բաշխման, բանկային գործառնությունների կիրառման, բանկերի շահույթի ձևավորման և բաշխման առանձնահատկությունների, բանկերի իրացվելիության հիմնադրույթների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ-ում ֆինանսավարկային մեխանիզմների կատարելագործման նպատակով կարող են կիրառել միջազգային առաջավոր փորձը: Նշվեց նաև, որ կրթական ծրագրի շրջանակներում վերլուծվել են բուհ-աշխատաշուկա կապը, ինչպես նաև բուհ-աշխատաշուկա կապի խորացման ուղղություններն ու հնարավորությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հավանություն տալ «Ֆինանսներ» մասնագիտության շրջանակում «Բանկային գործ» կրթական ծրագրի ներդրմանը և նպատակահարմար համարել այն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Սեպտեմբերի 7
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի սեպտեմբերի** 7-**ի նիստի** N 2 **արձանագրությունից**
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- «**Տնտեսագիտության**» **մասնագիտության շրջանակում** «**Միջազգային տնտեսագիտություն**» **կրթական ծրագրի ներդրման նպատակահարմարության մասին հարցը**:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

Նշվեց, որ «Միջազգային տնտեսագիտություն» կրթական ծրագիրը «Տնտեսագիտություն» մասնագիտության առանձին ճյուղավորում է և ենթադրում է «Տնտեսագիտություն» և «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությունների յուրօրինակ համադրում, որի ուսումնական պլանով բացի միջազգային տնտեսագիտության նեղ մասնագիտական առարկաներից, ուսումնասիրվելու են նաև քաղաքագիտություն, դիվանագիտություն, միջազգային հարաբերություններ առարկաները, ինչպես նաև նախատեսված է օտար լեզուների խորացված ուսումնասիրություն: Այսօր Հայաստանի Հանրապետության՝ միջազգային և տարածաշրջանային ինտեգրման խորացման պայմաններում, անհրաժեշտություն է դիվանագիտական գիտելիքներով օժտված տնտեսագետ կադրերի առկայությունը, որոնք արտաքին տնտեսական քաղաքականության մշակման, տարածաշրջանային ինտեգրման պայմանագրերի կնքման և բանակցությունների վարման, միջազգային տնտեսական կազմակերպություններին անդամակցության, օտարերկրյա ներդրումների ներգրավման, արտաքին առևտրի խթանման, նորագույն

տեխնոլոգիաների միջազգային փոխանցման և այլ միջազգային կապերի իրացման ժամանակ կկարողանան տվյալ հարաբերություններից բխող բոլոր տնտեսական օգուտները ծառայեցնել ի շահ Հայաստանի Հանրապետության: Նշված ուղղություններով բարձր որակավորում ունեցող մասնագետները իրական պահանջարկ ունեն ինչպես մակրոտնտեսական ոլորտներում, այնպես էլ ձեռնարկությունների մակարդակով: Տնտեսագետ-միջազգայնագետի որակավորմամբ մասնագետների պահանջարկը կայուն բարձր է նաև պետական հատվածում, այդ թվում՝ արտաքին առևտրային և ներդրումային քաղաքականության, միջազգային կառույցներին անդամակցությանն ու տարածաշրջանային ինտեգրմանը միտված քաղաքականության մշակման ու կիրարկման համար պատասխանատու նախարարություններում ու գերատեսչություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հավանություն տալ «Տնտեսագիտության» մասնագիտության շրջանակում «Միջազգային տնտեսագիտություն» կրթական ծրագրի ներդրմանը և նպատակահարմար համարել այն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Սեպտեմբերի 7
Երևան

ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2018 **թվականի սեպտեմբերի** 7-**ի նիստի** N 2 **արձանագրությունից**
(հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- **«Կառավարում» մասնագիտության շրջանակում «Ձեռնարկատիրության կազմակերպում» կրթական ծրագրի ներդրման նպատակահարմարության մասին հարցը**:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան**:

Նշվեց, որ «Ձեռնարկատիրության կազմակերպում» կրթական ծրագիրը «Կառավարում» մասնագիտության շրջանակում բակալավրական ծրագիր է 4 (չորս) տարի տևողությամբ, որի նպատակն է բարձրորակ մասնագետների պատրաստումը առևտրային կազմակերպությունների (ձեռնարկությունների) գործունեության կազմակերպման ոլորտում: «Ձեռնարկատիրության կազմակերպում» մասնագիտացման ապագա մասնագետը պետք է տիրապետի ՀՀ տնտեսական օրենսդրությանը, ի վիճակի լինի գնահատել քաղաքական, սոցիալական տարբեր ռիսկեր, արտաքին մարտահրավերներ, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության նրբություններ և այլն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջանավարտների համար ապահովվում է կայուն գիտելիքներ, հմտություններ և ունակություններ՝ հաշվի առնելով նաև այն, որ ուսումնառության ընթացքում մի շարք դասընթացներ և տարբեր պրակտիկ գործունեություն իրականացվելու է տարբեր գործընկեր ձեռնարկություններում, պետական կառավարման տարբեր կառույցներում, նաև պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում:

Ծրագիրը հիմնականում ընդգրկում է կառավարման ոլորտը, սակայն հատվում է նաև սոցիոլոգիայի, ֆինանսական, կառավարչական հաշվառման, վիճակագրության և տնտեսամաթեմատիկական մոդելավորման, տնտեսական իրավունքի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների հետ: Շրջանավարտները աշխատաշուկայում կարող են զբաղեցնել կառավարման ոլորտի այնպիսի պաշտոններ, որոնք պահանջում են առավել խոր և գիտական մակարդակի տնտեսագիտական և տեխնիկական ունակություններ: Նրանք կարող են աշխատել կազմակերպությունների և հիմնարկների, այդ թվում՝ դրանց կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև փոքր կազմակերպությունների ղեկավարներ, մասնավորապես՝ վերամշակող արդյունաբերության կառավարիչներ, շինարարության կառավարիչներ, մատակարարման, բաշխման և դրա հետ կապված կառավարիչներ, տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների ծառայությունների կառավարիչներ, առողջապահական ծառայությունների կառավարիչներ, գյուղատնտեսության և անտառային տնտեսության կառավարիչներ և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հավանություն տալ «Կառավարում» մասնագիտության շրջանակում «Ձեռնարկատիրության կազմակերպում» կրթական ծրագրի ներդրմանը և նպատակահարմար համարել այն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Սեպտեմբերի 7
Երևան